ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«30» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 02496

Ձեռնարկողը՝ **«ՄայՖորեսթ.էյէմ» ԲՀԿ**
ք. Երևան, Հյուսիսային պող., շենք 8, բն.16

Գործունեությունը՝ ***Ջրաշեն համայնքում կատարվելիք անտառհիմնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 02498

<<30>> 10 2020թ.

Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կատարվելիք անտառհիմնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՄայՖորեսթ.էյէմ» Բնապահպանական հասարակական կազմակերպություն
Փաստաթղթի տեսակը՝	Անտառհիմնման նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Ջրաշեն համայնքին պատկանող 345հա տարածքներում իրականացնել ցանկապատման, ծառատնկման, ամենամյա խնամքի միջոցառումներ, որի արդյունքում տարիներ հետո նախանշված համայնքը կունենա համայնքային անտառներ:

Նախատեսվող գործողությունը նպատակ ունի բնական էկոհամակարգերի և ստեղծվող անտառների համակցության արդյունքում բարելավել շրջակա միջավայրը, ինչպես նաև տեղային մակարդակով մեղմել կլիմայի գլոբալ փոփոխությունը:

Համայնքային անտառների հիմնումը կավելացնի երկրի անտառածածկը, կնպաստի արոտների խոտհարքերի բարելավմանը և այլն:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետի հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործողության տարածքը բաղկացած է երեք առանձին հողամասերից, որոնք գտնվում են Լոռու մարզի Ջրաշեն համայնքի վարչական տարածքում, բնակավայրի հարավային մասում, Մ3 միջպետական ճանապարհի աջ և ձախ կողմերում:

Նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են հետևյալ տեղամասերում.

Ջրաշեն 1՝ 40.7581° 44.2017°, 2040մ

Ջրաշեն 2՝ 40.7469° 44.2187°, 2180մ

Ջրաշեն 3՝ 40.7299° 44.2199°, 2250մ:

Տեղամաս 1-ը ներկայացնում է մարգագետնա-տափաստանային բուսականություն, որում գերակշռում են Փետրախոտ նեղատերև (*Stipa tirsa*) և Շյուղախոտ Ռուպրեխտի (Festuca ruprechtii) տեսակները:

Տեղամաս 2-ը ներկայացված է հացազգային մարգագետնատափաստանով՝ Շյուղախոտ վալիսյան (*Festuca valesiaca*) տեսակի գերակշռությամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈՒՄ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ COMMISSION OF EXPERTS

Տեղամաս 3-ը ներկայացված է ենթալպյան մարգագետնով՝ բարձրախոտային տարրերով:

Նախատեսվող տարածքի ռելիեֆը թեք է՝ 15⁰-25⁰, գտնվում է ծ.մ. 1950 բարձրության վրա:

Նախատեսված տարածքի բուսաբանական հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ նշված տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը և Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակները:

Հետազոտվող տարածքի ֆաունան տիպիկ է Կենտրոնական Հայաստանի միջինլեռնային բաց լանդշաֆտների համար և չի ցուցաբերում որևէ զգալի ինքնատիպություն՝ համեմատելով տարածաշրջանի նման լանդշաֆտների հետ: Այստեղ բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված անողնաշարավոր կենդանիների որևէ խմբի պատկանող տեսակներ:

Ինչ վերաբերվում է ողնաշարավոր կենդանիներին՝ ապա, հարող տարածքում գտնված է ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հայկական լեռնատափաստանային իժը (Vipera eriwanensis Reuss.), որը հիմնականում հանդիպում է անտառպատման համար ոչ մատչելի քարքարոտ ձորակների միկրոբիոտոպներում:

Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների արդյուքում նշված տարածքում անտառապատման միջոցառումների իրականացման վերաբերյալ մասնագետների կողմից որևէ առարկություն չի նշվել:

Նախատեսվող անտառվերականգնման տարածքի կլիման, ըստ ՀՀ կլիմայական շրջայնացման, ցուրտ-ցամաքային է: Այստեղ առկա կայանների և դիտակետերի տվյալների համաձայն՝ օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է -11°C -24°C սահմաններում, մթնոլորտային տեղումները՝ 450–550մմ սահմաններում: Լեռնագագաթներին և բարձրադիր այլ ջրբաժաններում ձնածածկույթը պահպանվում է մինչև մայիս–հունիս ամիսները, իսկ ցածրադիր շրջաններում՝ 1-2 ամսից մինչ 4, երբեմն 5 ամիս է:

Ջրագրական տեսանկյունից առավել նշանակալի է նախատեսվող անտառվերականգնման տարածքին մոտ անցնող Փամբ գետը՝ միանալով Փամբիջուր գետին թափվում է Փամբակ գետը:

Ուսումնասիրվող տարածքում հողային կազմը հիմնականում արտահայտված է լեռնատափաստանային խճաքարաշագանակավուն սևահողերով: Այստեղ հողի քարքարոտվածությունը 0-70սմ խորություններում բարձր է և հասնում է 10-30%-ի: 0–20սմ խորությունում հումուսի պարունակությունը տատանվում է 4-6%:

Տեսակների ընտրության ժամանակ նախագիծը հաշվի է առնում դրանց կենսաէկոլոգիական առանձնահատկություններն ու բնական աշխարհագրական արեալը: Առաջին հերթին, օգտագործվելու են տեղի անտառաճման պայմաններին լավ հարմարեցված տեղածին տեսակները, մասնավորապես, խոշորառէջ կաղնին, սրատերև ու բարձրլեռնային թխկին, կովկասյան տանձենին, սովորական ձիակասկը, իսկ թփատեսակներից՝ սովորական կիպրոսն ու Վանհուտի ասպիրակը: Ներմուծվող տեսականին բաժանվում է գլխավոր (գերակշռող ու հիմնական, առաջին շարահարկը զբաղեցնող) ու ակտիվատոր (գլխավոր տեսակի աճն ու զարգացումը խթանող, ինչպես նաև հողբարելավող, երկրորդ շարահարկը ձևավորող տեսակների:

Անտառմշակութային ֆոնդի տարածքը անտառաճման պայմանների առանձնահատկություններից ելնելով բաժանվում է երկու տեղամասի, որոնցում մեկն ըստ կազմի առանձնանում է մաքուր մշակույթների (թեք, սակավահզոր, քարքարոտ, լվացված լեռնալանջեր), մյուսը՝ խառը մշակույթների (համեմատաբար բարվոք պայմաններ):

«Ջրաշեն» տեղամասի 20հա մակերեսի վրա ընտրված է անտառի հիմնադրման ցանքսի և տնկման մեթոդները (17հա՝ ցանքս, 3հա՝ տնկում)՝ շախմատաձև դասավորությամբ (գծապատկերները ներկայացված են հայտում):

Հողի նախապատրաստման եղանակը կատարվելու է ձեռքով՝ համատարած փոսիկներով, որի տրամագծի չափը 0,25x0,25մ է, իսկ խորությունը՝ 0,25մ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЭКСПЕРТНЫЙ
COMMISSION
OF EXPERTS

Համաձայն անտառի ցանքսի (17հա) եղանակին ցանքատեղերի քանակը 1հա վրա նախատեսվում է 4000 հատ, ընդամենը՝ 68000 հատ: Հեռավորությունը շարքում կազմելու է 1մ, իսկ շարքից շարք՝ 2,5մ: Նախատեսվող գլխավոր տեսակը՝ կաղնի խոշորառէջն է:

Համաձայն անտառի տնկման (3հա) եղանակին տնկատեղերի քանակը 1հա վրա կազմելու է 3330 հատ, ընդամենը՝ 9990 հատ: Հեռավորությունը շարքում կազմելու է 1մ, իսկ շարքից շարք՝ 3մ: Նախատեսվող գլխավոր տեսակը՝ կաղնի խոշորառէջն է, իսկ ակտիվատոր տեսակը՝ կովկասյան տանձենին է, թփեր՝ չի նախատեսվում:

Սերմերի նախապատրաստման եղանակը ցանքսին ներկայացված է առանց սերմերի նախապատրաստման ախտահանմամբ:

Մշակույթների նկատմամբ խնամքի միջոցառումներից նախատեսվում է ագրոտեխնիկական խնամքը առաջիկա հինգ տարիների ընթացքում՝ 10 անգամ, այդ թվում.

2021թ.՝ 4 անգամ,

2022թ.՝ 3անգամ,

2023թ.՝ 2անգամ,

2024թ.՝ 1անգամ:

Մշակույթների պահպանության եղանակը և հակահրդեհային միջոցառումներն ընդգրկում են՝ ցանկապատում, անտառապահի նշանակում, հակահրդեհային քարոզչություն բնակչության շրջանում, շուրջօրյա հսկողություն, ինչպես նաև միջշարքային տարածությունների հնձում, հակահրդեհային հանքայնացված շերտերի պատրաստում և խնամք:

Հաջորդ տարվա (2021թ.) ամբողջ վեգետացիոն ժամանակաշրջանի ընթացքում անտառային մշակույթների կպչողականությունը պատշաճ մակարդակի հասցնելու, նրանց աճի, զարգացման համար կատարվելու է քաղհան-փխրեցում՝ 4-անգամյա ագրոտեխնիկական խնամք: Խնամքի աշխատանքները շարունակվելու են ևս 3 տարի. 2022թ.՝ 3, 2023թ.՝ 2 և 2024թ.՝ 1 անգամ:

Տարածքի անբավարար և խիստ հողակլիմայական պայմանների հետևանքով կանխատեսվում է մշակույթների մինչև 40% անխուսափելի անկում, որոնց համապատասխան խտությունը պահպանելու համար պահանջվում են լրացման աշխատանքներ՝ տնկման միջոցով: Լրացման աշխատանքները նախատեսվում են 2022թ. գարնանը՝ սոճու սերմնաբուսակներով, մինչև 31200 հատ:

Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ է լինելու 55 օր և 18 աշխատկից:

Գործունեությունն իրականացնելու համար օգտագործվելու է 20 հատ բահ, 2 հատ լոմ, 5 հատ կիրկա, 200գծմ թել, 40 զույգ ձեռնոց, 10 հատ դույլ, 610կգ կաղնու սերմ, 9990 հատ բուսակներ, որից՝ 4995 հատ կաղնի և 4995 հատ տանձենի:

Տնկիների վրա մարդածին գործոնի ազդեցությունը կանխելու, տարածքը չնախատեսված արածեցումից զերծ պահելու և այլ գործոնների ազդեցություններից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով կկատարվի ցանկապատում և անտառապահների նշանակում:

Ցանկապատումն իրականացվելու է երկաթբետոնե և փայտյա հենասյուներով և միջհենասյունային հեռավորությունները ամրացվելու են երկաթյա փշալարով:

Հենասյուները ամրացնելու նպատակով փորվելու են 15սմ տրամագծով և 40–45սմ փոսեր, որտեղ հենասյուները տեղադրելուց անմիջապես հետո իրականացվելու է նույն տեղամասից հանված հողով փոսալցում և հենասյան ամրացում: Փշալարի ստորին շերտի և գրունտի միջև հեռավորությունը նախատեսվում է 40–60սմ, որը տեղանքում առկա հավանական վայրի կենդանիներին իրենց բնական արեալում տեղաշարժվելուն չի խոչընդոտի:

Նախատեսվող գործողությունը և այնուհետև ստեղծված անտառները, որպես հետևանք, ունեն շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մի շարք կարևորագույն գործառույթներ, որոնցից են հողաշերտերի էրոզիայից և դեգրադացումից պաշտպանելը, կենսաբանական

բազմազանության պաշտպանությունը, բնակ.միջավայրերի ընդլայնումը, ջրերի մակերևութային հոսքի կարգավորումը, քամիների պորթկումների ժամանակ դրանց մեղմումը, խոնավության և ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նվազեցումը և այլն:

Նախատեսվող գործողությունները լինելով զուտ բնապահպանական միջոցառումների խումբ, անհրաժեշտություն է ունեցել խորը ուսումնասիրության և ճշգրիտ պլանավորման, որը թույլ է տվել վերացնել կամ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ռիսկերը:

Նախատեսվող գործունեության ընթացքում ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել միայն ճարտարագիտատեխնոլոգիական և կենսաբանական ռիսկերը, որոնց տրվել է որակական և քանակական գնահատական:

Ձեռնարկողի կողմից անտառհիմնման ընթացքում բավական մեծ ուշադրություն է դարձվում տեսակային կազմին: Տեսակային կազմում բացառապես ներկայացված են ծառերի և թփերի տնկիների տեղական և տարածաշրջանին բնորոշ անտառտնկարկային տեսակները: Այս տեսակները աճեցվում են ձեռնարկողի մասնագիտացված տնկարանում՝ պահպանելով ֆիտոսանիտարիայի բոլոր սահմանված նորմերը:

Ընդհանրացնելով ռիսկերը՝ կարելի է նշել, որ նախատեսվող գործողությունը, ունենալով բնապահպանական ուղվածություն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության տեսանկյունից ունի նվազագույն ռիսկեր, որոնք հեշտությամբ կառավարելի են:

Նախատեսվող գործողությունը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության տեսակետից գնահատվելով որպես նվազագույն ռիսկի գործունեություն, պարբերական մշտադիտարկման կարիք չունի:

Նախատեսվում են հետևյալ մշտադիտարկման գործընթացները՝

Երկրաբուսաբանական մեթոդներով նախատեսվում է իրականացնել ժամանակավոր մշտադտարկման տեղամասերի հիմնում, որոնց հիմնական նպատակն է ուսումնասիրել ցանկապատված անառհիմնման տարածքում կենսազանգվածի փոփոխությունները և բուսական տեսակների վարքը:

Կամերալ պայմաններում ուսումնասիրել ցանքսի համար նախատեսված սերմերի ծլունակությունը և այն համեմատել տեղամասում վեգետացիայի սկզբին ցանքսատարածության մեջ առկա սերմերի ծլարձակության հետ:

Կիրառելով քառակուսային և գծային տեղամասերի մշտադիտարկման մեթոդը, դաշտային պայմաններում ուսումնասիրել նախորդ տնկման շրջանում տնկված ծառաբուսակների կպչողականությունը:

Նշված համայնքում անտառի հիմնումը բնապահպանական բազմաթիվ օգուտներից բացի ունի մի շարք սոցիալական, կրթական բաղադրիչներ, որոնք ոչ պակաս կարևոր են համայնքների հարատև զարգացման համար:

Ծրագիրը հնարավորություն կտա մշտական և ժամանակավոր աշխատանքով ապահովել նշված և հարակից համայնքների ավելի քան 30 մարդու:

Ծրագրի կատարման ընթացքում կազմակերպությունը նախատեսում է կազմակերպել «համայնքային անտառ» ինստիտուտի կայացմանն ուղղված միջոցառումներ: Դասընթացների, գործնական աշխատանքների և տարաբնույթ այլ միջոցառումների միջոցով հնարավոր դարձնել համայնք-անտառ կայուն և անընդհատ զարգացող գոյակցությունը: Համայնքի բնակիչների մոտ անհրաժեշտ է զարգացնել գիտելիքներ, հմտություններ ու տրամադրել գործիքներ իրենց սեփականություն հանդիսացող որևէ համակարգի (բնական կամ գյուղատնտեսական) հարատև, անվտանգ ու շահավետ շահագործման համար: Թեպետ անտառը վերականգնվող բնական ռեսուրս է, այնուամենայնիվ այն անհրաժեշտ է ճիշտ կառավարել և շահագործել՝ վերջինիս ինքնավերականգնման ունակությունը չսպառելու համար:

Պատճառաբանական եզրահանգումներ

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Լոռու մարզպետարանը, Ջրաշենի համայնքապետարանն ու այլ գերատեսչություններ:

Փորձաքննության ընթացքում հայտը լրամշակվել է, որում հաշվի են առնվել նաև տրված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ջրաշեն համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող աշխատանքների ընթացքում պահպանել հայտում ներկայացված հիմնադրվող անտառային մշակույթների անտառաճման պայմանների աշխատանքների տեխնոլոգիական մոտեցումները:
- Ապահովել հակահրդեհային անվտանգության միջոցառումները, իրականացնել անտառային հրդեհների հայտնաբերումն ու կանխումը՝ համաձայն ՀՀ անտառային օրենսգրքի:
- Իրականացնել անտառների վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքները և պահպանել անտառային կենսաբազմազանությունը՝ համաձայն ՀՀ անտառային օրենսգրքի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄայՖորեսթ.էյէմ» ԲՀ կազմակերպության կողմից նախատեսվող Լոռու մարզի Ջրաշեն համայնքում կատարվելիք անտառհիմնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան